ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ՈՉ ԴՐԱՄԱՅԻՆ ԴՐԱՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ
Աջակցություն փախստականների, նրանց հյուրընկալող և սոցիալապես խոցելի անհատների կամ ընտանիքների փոքր և միկրո-ձեռնարկատիրական գործունեության վերսկսմանը կամ զարգացմանը

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Նպաստելով զարգացմանը՝ կանխարգելելու ճգնաժամը» ծրագրի շրջանակներում ՕքսԵՋեն հիմնադրամը հայտարարում է փոքր ոչ դրամային դրամաշնորհների մրցույթ **ՀՀ Արմավիրի մարզում բնակվող՝ Լեռնային Ղարաբաղից փախստական, նրանց հյուրընկալող սոցիալապես խոցելի անհատների կամ ընտանիքների** համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.	Ովքեր կարող են դիմել	ՀՀ Արմավիրի մարզում բնակվող՝ Լեռնային Ղարաբաղից փախստական կամ նրանց հյուրընկալող սոցիալապես խոցելի անհատներ կամ ընտանիքներ: Խրախուսվում է երիտասարդների, կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև գյուղական բնակավայրերում ապրող և ցածր եկամուտ ունեցող ու սոցիալապես խոցելի անհատների մասնակցությունը:
2.	Դրամաշնորհների տեսակը	Բիզնես գործունեության համար անհրաժեշտ՝ մինչև 1,600,000 ՀՀ դրամի գույք, սարքավորումներ, աշխատանքային գործիքներ
3.	Նպատակը	Գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական փոքր կամ միկրո-ձեռնարկատիրական կամ անհատական/ընտանեկան գործունեության/ձեռներեցության վերսկսում կամ զարգացում
4.	Դրամաշնորհների տրամադրման ընթացակարգը	1) Հետաքրքրված անձինք պետք է ներկայացնեն կից ձևաչափի հայտադիմումը 2) Նախնական ընտրված առնվազն 30 Հայտատուները կմասնակցեն ՕքսԵՋեն հիմնադրամի կողմից կազմակերպված բիզնես ուսուցման և բիզնես նախագիծ մշակելու դասընթացներին 3) Ուսուցումը հաջող անցած Հայտատուներից՝ հանձնաժողովի կողմից, ըստ սահմանված ընթացակարգի և չափանիշների, կընտրվեն լավագույն բիզնես նախագիծը մշակած և ներկայացրած առնվազն 15 Դրամաշնորհառուներ 4) ՕքսԵՋեն հիմնադրամը ձեռք կբերի բիզնես նախագծով նախատեսված անհրաժեշտ գույքը, սարքավորումները և/կամ աշխատանքային գործիքները
5.	Ում կտրվի առավելություն	Առավելություն կտրվի այն Հայտատուներին, ովքեր կկատարեն դրամային կամ ոչ դրամային լրացուցիչ ներդրում (համաֆինանսավորում): Ընդ որում, Հայտատուն իր համաֆինանսավորումը պետք է իրականացնի ՕքսԵՋեն հիմնադրամի հետ համաձայնեցված դեպքերում և կարգով:
6.	Դիմելու կարգը	Հայտադիմումներն ու կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն մինչև սույն թվականի հունիսի 30-ը, ժամը՝ 24:00: Հայտադիմումները կարող եք ուղարկել BGhazaryan@oxygenfund.am էլ. փոստի հասցեին կամ ՕքսԵՋեն հիմնադրամի գրասենյակ՝ ք. Երևան, Դ. Անհաղթի 23, գրասենյակ 19 հասցեով: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել՝ +374 91 108778 հեռախոսահամարով:

Հավելվածներ՝
Հայտադիմումի ձևաթուղթ